Չորրորդ հաղորդում

Սողոմոնի փառահեղ թագավորությունը հազարամյայում Քրիստոսի թագավորության նախատիպն է

Գրվածքների ընթերցում. Գ Թգ 10:1-24, Սղմ 72:1-8, 11, 17-19, Հյտ 11:15, 20:4, 6

I. Սողոմոնի փառահեղ թագավորությունը՝ Աստծու հարուստ օրհնության ներքո նրա բարօրությամբ հանդերձ, հազարամյայում Քրիստոսի թագավորության նախատիպն է՝ Գ Թգ 4:20–5:18.

Ա. Գ Թգ 9 և 10-րդ գլուխները պատկերում են ազգերի միջավայրում Սողոմոնի փառքի գագաթնակետը:

Բ. Սողոմոնը Իսրայելի թագավորության մեջ փառավորվեց իր թագավորության շքեղությամբ. սա հազարամյայում Քրիստոսի նախանկարն է՝ խխ. 1-24:

II. Իր երկրորդ գալստյան ժամանակ Քրիստոսը կտիրի երկրին, որը տրվել է Նրան որպես Իր սեփականություն, և կհաստատի Աստծու թագավորությունն ամբողջ երկրի վրա՝ այդպիսով վերականգնելով Աստծու իրավունքը երկրի նկատմամբ՝ Սղմ 24:1.

Ա. Սղմ 24:7-10-ը բացահայտում է հաղթանակող Քրիստոսին՝ որպես եկող Թագավորի, Աստծու հավիտենական թագավորության մեջ:

Բ. Եհովան Հիսուսն է, իսկ Հիսուսը մարմնացած, խաչված ու հարուցված Եռամեկ Աստված է, ով մարտնչելու մեջ ուժեղ է և հաղթական՝ Հյտ 5:5:

Գ. Նա Մեկն է, ով վերադառնալու է Իր հարության մեջ Իր հաղթողների հետ միասին, որպեսզի տիրի երկրին՝ որպես Իր թագավորությանը՝ Դնլ 2:34-35, 7:13-14, Հվլ 3:11, Հյտ 11:15, 19:13-14:

III. 72-րդ սաղմոսը թագավորող Քրիստոսի մասին է, ում նախատիպը թագավորող Սողոմոնն է.

Ա. 72-րդ սաղմոսը իրականում նվիրված է Սողոմոն թագավորին, ով Քրիստոսի՝ որպես Թագավորողի նախատիպն է՝ Մտթ 12:42.

1. Քրիստոսը՝ որպես Դավթի որդին, Նա է, ով ժառանգելու է Դավթի գահն ու թագավորությունը՝ 1:1, Բ Թգ 7:12-13, Ղկս 1:32-33:
2. Երկրի վրա չարչարանքի Իր կյանքից հետո, չարչարանք, որի նախատիպը Դավթի չարչարանքներն էին, Քրիստոսը համբարձվեց երկինքներ, որտեղ այժմ թագավորում է որպես Թագավորը, որի նախատիպը Սողոմոնն է՝ Ա Կրթ 15:25, Հյտ 17:14:

Բ. 72-րդ սաղմոսում թագավորող Քրիստոսը ներկայացված է թագավորող Սողոմոնի նախատիպով (Մտթ 1:1, 22:42)՝ նրա բարօրության ու բարգավաճման ժամանակ (Գ Թգ 9–10), ինչը մատնանշում են այս սաղմոսի վերնագիրն ու առաջին խոսքը.

1. 72-րդ սաղմոսը բացահայտում է, որ Քրիստոսը կթագավորի երկրի

վրա, և բոլոր թագավորները կխոնարհվեն Նրա առջև, ու բոլոր ազգերը կծառայեն Նրան՝ խխ. 1-8, 11:

2. 72-րդ սաղմոսը փառավոր նկարն է այն բանի, թե ինչպիսին կլինի դրությունը, երբ Տերը վերականգնի ողջ երկիրը, տիրի ողջ երկրին և թագավորի ողջ երկրի վրա՝ խխ. 17-19:
3. Սողոմոնի նախատիպով ներկայացված Քրիստոսի թագավորումը կլինի հազարամյայում՝ վերակերտման դարաշրջանում՝ Հյտ 20:4, 6, Մտթ 19:28:

IV. «Աշխարհի թագավորությունը մեր Տիրոջ և Նրա Քրիստոսի թագավորությունը դարձավ, ու Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից»՝ Հյտ 11:15.

Ա. Քրիստոսի թագավորությունը հազարամյան է. այն նաև Աստծու թագավորությունն է՝ 20:4, 6, Մտթ 16:28, 13:41, 43:

Բ. Թագավորության՝ որպես Քրիստոսի և Աստծու թագավորության տեսանկյունով Քրիստոսը թագավորում է Աստծու հետ. կարելի է նաև ասել, որ Քրիստոսը թագավորում է որպես Աստված՝ Հյտ 11:15:

Գ. Աշխարհի թագավորությունը կդառնա Քրիստոսի թագավորությունն այն բանից հետո, երբ Նա Իր վերադարձի ժամանակ իրագործի Իր դատաստանն ազգերի հանդեպ՝ Դնլ 7:13-14, 2:44-45:

Դ. Հյտ 11:15-ում Տիրոջ հավիտյանս հավիտենից թագավորելը Նրա՝ հազարամյա թագավորության մեջ և նոր երկնքում ու նոր երկրում հավիտենապես թագավորելն է՝ 22:5:

Ե. Բոլոր հաղթողները Քրիստոսի հետ թագավորելու են հազար տարի, իսկ բոլոր փրկվածները թագավորելու են հավիտյանս հավիտենից հավիտենությունում՝ 20:4, 6, 22:5:

V. Այն բանից հետո, երբ Տեր Հիսուսը ներգործության ենթարկի հավատացյալներին, հրեաներին և ազգերին, Նա կբերի հազարամյան՝ երկրի վրա Քրիստոսի և Աստծու թագավորությունը հազար տարով՝ 20:4, 6.

Ա. Հազարամյան վերաբերում է այն ժամանակին, երբ Քրիստոսը վերստին կգա որպես Թագավոր՝ աշխարհը կառավարելու համար, և մինչև նոր երկինքն ու նոր երկիրը:

Բ. Հազարամյայի ժամանակ բոլոր ազգերը գալու են Քրիստոսի մոտ՝ Զք 14:16:

Գ. Հին Կտակարանում հազարամյա թագավորությանը վերաբերող բազմաթիվ խոսքեր կան՝ Սղմ 2:6, 8-9, Եսյ 2:2-5, 11:1-10, 65:20-25, Զք 8:20-23, 14:16-21:

Դ. Գրծ 3:21-ում «վերակերտման ժամանակները» արտահայտությունը վերաբերում է հազարամյային.

1. Այս վերակերտումը կազդի ոչ միայն մարդու, այլև ամբողջ տիեզերքի վրա՝ երկինքների, երկրի, կենդանիների և նույնիսկ ծառերի վրա:
2. Այն ամենը, ինչ մարդու անկման պատճառով անիծվել էր, կվերակերտվի՝ Եսյ 11:6, 30:26:

Ե. Հազարամյան Աստծու կողմից դեռևս կօգտագործվի որպես պատրաստության դարաշրջան.
   1. Այս դարաշրջանի ընթացքում Աստված կկատարելագործի այն սրբերին, որոնք չեն կատարելագործվել եկեղեցու դարաշրջանում, որպեսզի նրանք որակավորվեն մտնելու Նոր Երուսաղեմ Աստծու հավիտենական թագավորության համար:
   2. Հազարամյայի ընթացքում Աստված նաև կմաքրի վերակերտված ազգերին, որպեսզի նրանք լինեն նոր երկրի վրայի ժողովուրդը:

Զ. Աստծու Որդի Քրիստոսին հավատացողները վերածնվել են՝ մտնելով Աստծու թագավորություն, և նրանք եկեղեցական կյանքում են՝ այսօր ապրելով Աստծու թագավորության մեջ, բայց հազարամյային կմասնակցեն ոչ բոլոր հավատացյալները, միայն հաղթողները՝ Հվի 3:5, 15-16, Հռմ 14:17, Հյտ 12:10-11, 2:26-27, 3:21:

VI. Մտթ 16:28–17:5-ում նկարագրվածը հազարամյայում երկինքների թագավորության դրսևորման մանրապատկերն է.

Ա. Այս մանրապատկերի կենտրոնը փառավորված Հիսուսն է, և Նրա հետ են Մովսեսն ու Եղիան, որոնք ներկայացնում են հինկտակարանյան հաղթողներին, և Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը, որոնք ներկայացնում են նորկտակարանյան հաղթողներին՝ խխ. 1-3:

Բ. Լեռան վրա Տեր Հիսուսի հետ լինելով՝ Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսն ունեցան թագավորության գալիք դրսևորման կանխահամը՝ 16:28–17:3:

Գ. Տեր Հիսուսի այլակերպվելը նշանակում է, որ Նրա մարդկայնությունը հագեցած ու ներծծված էր Նրա աստվածայնությամբ. այս այլակերպումը Նրա փառավորումն էր՝ խ. 2.
   1. Տեր Հիսուսի այլակերպումը՝ շողալը, Իր թագավորության մեջ Իր գալն էր. որտեղ Նրա այլակերպումն է, այնտեղ թագավորության գալն է՝ Մրկ 9:1-4, Ղկս 9:27-31:
   2. Տեր Հիսուսի այլակերպումը Նրա ով լինելու գիտակցումն էր:
   3. Թագավորությունը Տեր Հիսուսի իրականության շողալն է. Նրա շողալու ներքո լինել նշանակում է թագավորության մեջ լինել՝ Հյտ 22:4-5:
   4. Հազարամյայում հաղթող հավատացյալները կլինեն Քրիստոսի հետ թագավորության պայծառ փառքի մեջ. «այդ ժամանակ արդարներն արևի պես շողալու են իրենց Հոր թագավորության մեջ»՝ Մտթ 13:43ա և ծթգ 1 և 2:

© 2022 Living Stream Ministry